

ներ : Վերջին երեսուն տարուան շրջանին արևելիան քանի մը վիլայէթներու մէջ՝ քրդացած հայերու թիւը նուազ քանակութիւն մը չէ որ կը կազմէ :»

Կը տեսնուի որ պատմական ժամանակներէ Պալըքցի այժմու Քիւրդ ցեղը Հայեր եղած են , լեզունին նոյնն է , ինչպէս և կրօնական ծէսերը թէ Տիգրանակերտի և թէ Սասունի մէջ՝ ուր անոնք մշտապէս կը բնակին :

Իսկ Համիտական շրջաններուն քրդացած Հայերու համար այնքան պատմութիւններ , նկարագրութիւններ , փաստեր ու բողոքներ կան . որոց մասին ոչ մի կասկածի տեղի չը կայ :

Խաֆիրութիւն , օրինակի համար սուրբ մ'է որ քրդերը կ'ստանան հայերէն . այս սուրբը հարսասհարական կամ աւազակային չէ . ինչպէս կը կարծեն հայերը , և կամ վայրենութիւն ու զեղծում՝ որուն դէմ առնել պատե՛հ ժամ չէ , ինչպէս կը մտածէ կառավարութիւնը :

Խաֆիրութիւնը Քիւրդ իշխանութեան մէկ իրաւունքն է , որ ուժով կը պահպանուի հարկառու և հարկատու սիստէմին մէջ :

Վանի Մոկս գաւառի բէգերը իրենց խաֆիրութիւնը ոչ միայն կը գործադրեն գոյքերու վրայ այլև անձերու . մէկ բէգը , իր իշխանութեան ենթարկեալ հայուն կը ծախէ մի ուրիշ բէգի , այնուհետև ծախուածը իր հարկը կը վճարէ իր գնողին . և ի հարկին կը վայելէ անոր պաշտպանութիւնը :

Ճահվար անուն հայ մը ծախուած էր Շըխի-բէգին հազար զուրուշով . երբ հայերը սուր կրելու իրաւունքէ զրկուած էին , որոջ վճարով միայն իրենց կը թոյլատրուէր ասկէ քանի մը տարի առաջ դէնք կրելու :

---

Ս. Սարգսի հաւատքը այն աստիճանին կը հասնի որ դատ ունեցած ժամանակ գաւազանը գետին կը ձգեն , ու որ վերցնէ անոր միայն կը հաւատան , ու երգումնին ադոր վրայ կընեն :

Իրենց մէջ ունին կիսափուլ վանքեր ուր կերթաի նոյնպէս մատաղներ ընելու , այդ վանքերը ուխտի գնացող քրիստոնէաներուն չեն դպչիր և ոչ մէկ աւազակութեան դէպք չի պատահիր այդ առթիւ :